

**Ընկերության գործակալին տրված լիազորությունները**

**ԳՈՐԾԱԿԱԼԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ անունից իրականացնում է ապահովագրական միջնորդային գործունեության հետևյալ գործառնությունները`**

- ապահովագրական պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում նաև ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից մատուցվող ապահովագրական ծառայությունների մասին ապահովագրական խորհրդատվության իրականացում,
- ապահովադիրների ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հետ ապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում,
- ապահովագրական պայմանագրի կատարման օժանդակում, ներառյալ ապահովագրավճարների հավաքման իրականացում կամ վերահսկում:

**ԳՈՐԾԱԿԱԼԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ անունից ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրության բոլոր այն դասերի գծով, որոնցով Ապահովագրողն ունի համապատասխան լիցենզիա, մասնավորապես`**

- Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ)
- Առողջության ապահովագրություն
- Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային տրանսպորտի)
- Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն
- Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև` բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև` բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն
- Աջակցության ապահովագրություն

ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից կնքված ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) գծով կանխիկ կերպով հավաքագրված ապահովագրավճարների թույլատրելի առավելագույն չափը սահմանված է 1 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

ՊՁԾԻ ԴՁԵԱ զՇ ՇճՅ՝ ԻՅՅ օՂձժՍ ՈՅ՝ ԻձժՍՅՂ Ի ԻՅձՍՂՅՂճՂ:

ՊՁԾԻ ԴՁԵԷ կ ո ղ մ ի ց կ ի ր առ վ ո ղ ս ակ ազ ն ե ր ի ս ա հ մ ան ա չ ա փ ե ր ը հ ամ ապատաս խան ու մ են Ընկերությունում կ ի ր առ վ ո ղ ս ակ ազ ն ե ր ի ս ա հ մ ն ա չ ա փ ե ր ի ն :

